ՀՀ ՓՊ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՈՒԶԲԵԿՍՏԱՆՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ. ՈՒԶԲԵԿՍՏԱՆԻ ԵՎ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ ՓՈՐՁԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

07.11.2022 15:27

Նոյեմբերի 4-ին ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանն աշխատանքային այցով գտնվել է Ուզբեկստանի Հանրապետությունում:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահը Ուզբեկստանի Փաստաբանների պալատի նախագահ Ալիմ Էրնազարովի հրավերով մասնակցել է «Փաստաբանության զարգացման հեռանկարները. Ուզբեկստանի և արտասահմանյան երկրների փորձը» խորագրով միջազգային համաժողովին:

Համաժողովին մասնակցում էին փաստաբանության բնագավառի շուրջ 200 ներկայացուցիչներ մի քանի տասնյակ պետություններից:

ՀՀ Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը համաժողովի շրջանակներում հանդես է եկել ելույթով:

ՀՀ փաստաբանների պալատի և Ուզբեկստանի փաստաբանների պալատի նախագահներն ունեցել են նաև առանձին հանդիպումներ, որի շրջանակներում երկու պալատների միջև կնքվել է համագործակցության համաձայնագիր:

Համաձայնագրով կողմերը մեծապես կարևորել են միջազգային համագործակցությունը փաստաբանության զարգացման գործում, մասնագիտական փորձի փոխանակման, ինչպես նաև կորպորատիվ ոլորտներում:

Ըստ էության, նշված փաստաթղթով կողմերի միջև ամրապնդվում են առկա գործընկերային հարաբերությունները և ստեղծվում նոր հնարավորություններ հետագա համագործակցությունները զարգացնելու համար:

BACK $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })